(Դիոնէսիոս)։ Եւ եկեալ Թարգմանին պատմեաց խորհըր-
դականաց, և նոքա ծանուցին զիրս Դատաւորին և Նուրի
Էֆէնտեայ. և 'ի ստիպել Քաղաքապետին, գնացին Հայք
բազմութեամբ անձինք իբրեւ 30. և նորա կոչեալ զկինն,
ցուցանել ասէ զհարկանողն, և նորա հայեցեալ ասէ, չէ
'ի միջի սոցա, եւ Յոյնք ջանացին վկայութեամբ հաստա-
տել զբան կնոջ, Թէպէտեւ Հայք պատմեցին զարարս լկտի
կնոջ. բայց Քաղաքապետն ոչ անսացեալ բանից նոցա ա-
սէ՝ 2 վկայիւք կախի մի ոք, ահա ամբաստանողն և վկայ-
քըն, չունիմ պէտս այլոց վկայից, անպատճառ տուք 'ի
ձեռս իմ զվարդապետն զայն. չհանդուրժեալ Հայոց, ա-
ղաղակ բարձին, լուեալ իսկ է մեր ասեն՝ զդարանն զոր
գործեն ոմանք՝ և կինս այս եղեւ գործի չարութեան նո-
ցին, և վասն միոյ անզգամի աղարտեցեր զպատիւ վանից,
առաւթուր հարկէր զկրօնաւորս, Թերեւս այսուհետեւ այլ
իմն տարօրինակ ամբաստանութիւն յարուսցեն 'ի վերայ
մեր. ուստի չէ արժան մեզ այսուհետեւ մնալ 'ի քաղա-
քիս յայսմիկ, առեալ գիր 'ի Դատաւորէն փութասցուք
մեկնիլ աստի։ Եւ ելեալ անտի գնացին առ Դատաւորն,
և նա յղեաց զսպասաւոր իւր և զկինն արամբ, այլ վկայքն
փախեան 'ի ճանապարհի. Դատաւորն հարցեալ տեղեկա-
ցաւ ամենայն հանգամանաց գործոյն, և ապա խրատեաց
զկինն ամօք բանիւք՝ Թէ չէ արժան առն քրիստոնէի եւ
ուխտաւորի գործել զայդպիսիս՝ եւ դիմել 'ի դրունս, և
եթէ պատահեսցի եւս, պարտ է դիմել առ գլխաւորս
վանաց, և այլ յորդորական բանիւք հանդարտեալ արձա-
կեաց զնա։ Իսկ Հայք ամբաստան եղեն զանպատշաճ գոր-
ծոց Քաղաքապետին և խնդրէին գիր մեկնիլ յԵրուսաղէ-
մէ. զի զնախատինս զայս 'ի դրդմանէ Յունաց արար, և
Թերեւս արասցէ. Դատաւորն բարեյորդոր բանիւք հան-
դարտեաց զՀայս եւ դարձոյց զնոսա 'ի վանս իւրեանց։
Եւ առաքեաց զմի ոմն յիւրոց ասել ցՔաղաքապետն՝ Թէ
Պատրիարքունք քրիստոնէից հրովարտակաւ Արքայի ու-
նին իշխանութիւն կառավարել զմիաբանս և զուխտաւորս
իւրեանց, և որոց չիցեն ձեռնհաս՝ առաքել առ Դատաւորն
եւ նորա տնօրինել ըստ օրինաց զգործն։ Կոչեաց նաեւ
զՄէհէմմէտ ոմն հաւատարիմ նորին, փախուցեալ յերե-